վասն աղմկի և վասն ըստ անձին վրէժխնդրութեան՝ բնակողք տան ազատապէս հարկանել և դուրս ձգել մինչ խոցել, այլ ոչ սպանել։

ԳԼՈՒԽ ՆԿԲ.

Ամենայն ոք որ ստութեամբ ձեռնադրէ այլոց անուամբ թուղթ՝ հրով կիզեսցի ձեռն ձեռնադրողին, և եթէ հրովարտակ, և կամ հրաման ինչ 'ի ժամանակի պատերազմի մահու մեռցի։

ԳԼՈՒԽ ՆԿԳ.

Ամենայն ոք որ նենգաւորութեամբ հրաձիկ առնէ գեօղ կամ տունս իւր և կամ այլոց զի նովաւ այրեսցի և մեռցի ոք, նա ևս մահու մեռցի, և եթէ 'ի այրեցմանէ ոչ ոք մեռցի հատուցանէ միայն արժանաւորութիւնն այրեցեալ իրին։

ԳԼՈՒԽ ՆԿԴ.

Ամենայն ոք որ սպանցէ այր կամ կին, մանուկ և կամ երեխայ և որում չափի և որում հասակի որ լցէ բնութիւն մարդոյ մահու մեռցի։

ԳԼՈՒԽ ՆԿԵ.

Ամենայն ոք որ բռնադատութեամբ լկեսցի